Ապահովագրական հատուցման դիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերի ներկայացման եղանակը

Ապահովագրական հատուցման դիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերն ապահովագրական ընկերությանը կարող են ներկայացնել հետևյալ եղանակով՝

1. այն դեպքում, երբ Բյուրոյի կանոններով նախատեսված է փաստաթղթի բնօրինակի կամ դրա նոտարական կարգով հաստատված պատճենի ներկայացում, այն ներկայացվում է համապատասխան ապահովագրական ընկերության գրասենյակ կամ ուղարկվում է նրա պաշտոնական փոստային հասցեին,
2. այն դեպքում, երբ Բյուրոյի կանոններով նախատեսված է փաստաթղթի պատճենի (լուսապատճենի) ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ համապատասխան ապահովագրական ընկերության գրասենյակում կամ ուղարկվում է պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից կամ, համապատասխան Ապահովագրողի համաձայնությամբ, ուղարկվում է ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված Ապահովադրի հեռախոսահամարով գրանցված բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) Ապահովագրողի կողմից տրված հեռախոսահամարին: